ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/18

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի 10.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/18 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 04.07.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 13.06.2017թ. ժամը 11:00-ին՝ օրենքով սահմանված կարգով, փաստաթղթերի անհրաժեշտ փաթեթն իր համապատասխան հավելվածներով ներբեռնել է համակարգ, որից հետո ստացվել է հետևյալ պատասխանը. «ներբեռնումը հաջողությամբ կատարված է»:

13.06.2017թ. ժամը 14:00-ին Ընկերության գնումների համակարգողը, տեղեկատվություն ստանալու նպատակով, կապ է հաստատել Պատվիրատուի Ընթացակարգի քարտուղարի հետ, ով հայտնել է, որ «Հարավկովկասյան երկաթուղի»

ՓԲԸ-ի հայտը չի բացվում ծրագրային անսարքությունների պատճառով, ուստի Պատվիրատուն տվյալ հարցի կարգավորման նպատակով կդիմի ՀՀ ֆինանսների նախարարություն՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Ընկերությանը:

Այնուհետև, հրապարակվում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությունը, համաձայն որի մերժվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ բացակայում են հայտի հղումները, սակայն Ընկերությունը գտնում է, որ նշված փաստը չի համապատասխանում իրականությանը, քանի որ պետական գնումների պաշտոնական կայքից «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի էլեկտրոնային հասցեին 13.06.2017թ. ժամը 12:04-ին ստացվել է նամակ-ծանուցում՝ բարեհաջող ներբեռնման մասին:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է բավարարել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի բողոքը և ընդունել համապատասխան որոշում:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից 04.07.2017թ. ստացված բողոքը, 06.07.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1162658]-17 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ ***նախքան պայմանագրի կնքումը*** բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Միևնույն ժամանակ Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:*** Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:***

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն 10.07.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը. ««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից

կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. հունիսի 5-ի N 1 որոշմամբ հաստատված ընթացակարգի հրավերի 2.3-րդ կետի համաձայն՝ արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի»:

Նույն կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Նույն կետի 3-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգում հաղթող ճանաչված «Դ.Ր.Օ Երկգիշին» ՍՊԸ-ի միակ հիմնադիր և սեփականատեր Արկադի Արեստի Եդիգարյանը հանդիսանում է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի Մասիսի գծային մեքենայացված կայանի պետը, ով մինչ օրս աշխատում է գլխավոր տնօրենի ղեկավարության ներքո:

Ընկերությունը խնդրել է Խորհրդին բավարարել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի բողոքը և ընդունել համապատասխան որոշում:

Ի լրումն 10.07.2017թ. ներկայացրած բողոքի «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն 12.07.2017թ. գրությամբ հայտնել է, որ «Դ.Ր.Օ Երկգիշին» ՍՊԸ-ի սեփականատիրոջ հարազատ եղբայրը՝ Արամ Արեստի Եդիգարյանը, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ում մինչ օրս զբաղեցնում է գլխավոր ինժեների (հավասարեցված է գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնին) ղեկավար պաշտոնը, իսկ «Դ.Ր.Օ Երկգիշին» ՍՊԸ-ի տնօրեն

Դավիթ Մովսիսյանը՝ Արամ և Արկադի Եդիգարյանների քրոջ որդին, ներկայումս աշխատում է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ում, որպես առաջատար ինժեներ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.07.2017թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 10.07.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 17.07.2017թ. թիվ 40-1989 գրությամբ հայտնել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով էլեկտրոնային եղանակով հայտ են ներկայացրել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն և «Դ.Ր.Օ Երկգիշին» ՍՊԸ-ն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից «armeps.am» համակարգ բեռնված հայտի հավելվածները դիտելու համար հղումը բացակայում էր («Հղ» դաշտը դատարկ էր), ուստի հանձնաժողովը չի կարողացել դիտել և գնահատել հայտը, այդ իսկ պատճառով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընտրված մասնակից է ճանաչել «Դ.Ր.Օ Երկգիշին» ՍՊԸ-ին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.07.2017թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ներքին հարթակի երկաթուղիների և տրանսֆորմատորային ուղիների վերանորոգման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն և «Դ.Ր.Օ Երկգիշին» ՍՊԸ-ն:

2. ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի անգործության ժամկետ է սահմանվել 22.06.2017թվականից 27.06.2017 թվականը:

3. ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից www.gnumner.am կայքում հրապարակված կնքված պայմանագրի մասին հայտարարության համաձայն՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 2017թ. հուլիսի 6-ին ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն «Դ.Ր.Օ Երկգիշին» ՍՊԸ-ի հետ կնքել է թիվ 02/089 պայմանագիրը:

4. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն 04.07.2017թ. բողոք է ներկայացրել Խորհրդին, որին ի պատասխան՝ Խորհուրդն 06.07.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1162658]-17 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ ***նախքան պայմանագրի կնքումը*** բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Միևնույն ժամանակ Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:*** Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:***

5. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն 10.07.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը. ««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից

կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. հունիսի 5-ի N 1 որոշմամբ հաստատված ընթացակարգի հրավերի 2.3-րդ կետի համաձայն՝ արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի»:

Նույն կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Նույն կետի 3-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգում հաղթող ճանաչված «Դ.Ր.Օ Երկգիշին» ՍՊԸ-ի միակ հիմնադիր և սեփականատեր Արկադի Արեստի Եղիգարյանը հանդիսանում է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի Մասիսի գծային մեքենայացված կայանի պետը, ով մինչ օրս աշխատում է անմիջապես գլխավոր տնօրենի ղեկավարության ներքո:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի 10.07.2017թ. բողոքը և ի լրումն բողոքի 12.07.2017թ գրությունը՝ կից նյութերով, ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 17.07.2017թ. թիվ 40-1989 գրությունը, «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգի հրավերը, ՀՀ «Հայկական

ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ի կողմից www.gnumner.am կայքում հրապարակված կնքված պայմանագրի մասին հայտարարությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին*** ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:*** Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:***

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:***

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ***անգործության ժամկետ է սահմանվել 22.06.2017 թվականից 27.06.2017 թվականը***:

Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում հրապարակված կնքված պայմանագրի մասին հայտարարության համաձայն՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-4/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ***2017թ. հուլիսի 6-ին ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ն «Դ.Ր.Օ Երկգիշին» ՍՊԸ-ի հետ կնքել է թիվ 02/089 պայմանագիրը,*** մինչդեռ՝ ***«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն բողոք է ներկայացրել 10.07.2017 թվականին***:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդը գտնում է, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն 10.07.2017թ. բողոք է ներկայացրել Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով սահմանված պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից 10.07.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ